

րես խորհրդածելու համար Հայոց պատմութեան դժբախտ դէպքերուն եւ անոնց պատճառներուն վրա:

Տարիքը յառաջացած էր արդէն, ա-

յակովարար շատ երկար չապրեցաւ: Կոմագենացի ծննդեան քաակամը կը դնէ 1020

Շ. ՆԱՐԳՈՒՆԻ

ՀՐ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ՝ «Լեռնային Պատերազմ»,

Թարգմ. Գնդ. Տ. Բաղդասարեան,

Մատենադար «Ռազմիկ», Թիւ 2, 1938, Փարիզ:

Հայ Կառնուրներին եւ Մարտիկներին Միութիւնը օգտակար գործի է ձեռնարկել՝ հիմնելով «Ռազմիկ» շաբաթաբերքն ու «Ռազմիկ» մետեմաշարը: Մեր երիտասարդութիւնը, մանաւանդ, շատ պէտք ունի զինուորական դաստիարակութեան:

«Ռազմիկ» մատենաշարի առաջին հրատարակութիւնը՝ «Երկու տարի հայկական բանակի մէջ»՝ ժամանակին համակրանքով ընդունեց հայ մամուլի կողմից: Եւ, յիշատի, դրանք հետաքրքրական ձեռնով գրած յուշեր էին Հայաստանի հանրապետական բանակի կեանքից: Ներկայ գրքոյն կրում է տեսական բնոյթ եւ շօշափում է լեռնային պատերազմի խնդիրները:

Հեղինակը՝ Հր. Փաստրմանեան, հայ ակաճար գործիչ Արմէն Գարոյի զաւակը, մեր զարգացած եւ յուսատու երիտասարդներից է, որ հետաքրքրուում էր ապրում է Հայաստանի հարցերով եւ որ լեռնային պատերազմի խնդիրները ուսումնասիրել է յատկապէս հայ երիտասարդութեան զինուորական զարգացման զարկ տալու նպատակով: Անպայման հմուտ իր ընտրած նիւթի սահմաններում՝ երիտասարդ հեղինակը շատ յստակ կերպով ներկայացնում է լեռ-

նային պատերազմի հիմնական սկզբունքները՝ ելակէտ ունենալով պատերազմի փորձերը եւ զինուորական գիտութեան վերջին խօսքը:

Լեռնային պատերազմի արեւստի տիրապետութիւնը մասնաւորապէս կարեւոր է հայ զինուորականութեան համար. որովհետեւ Հայաստանն ու շրջակայ պետութիւնները գերազանցապէս լեռնային երկրներ են: Փաստրմանեանի գրքոյն մի տեսակ ներածութիւն է այդ արեւստի ուսումնասիրութեան. նա տալիս է ընդհանուր սկզբունքներ ու հրահանգներ, տեսական սահմանաւորումներ. յաջորդ քայլը պէտք է լինի մանրամասնութիւններ եւ գործնական հանգամանքների աւելի լայն ծանօթութիւնը: Եւ այդ, անշուշտ, «Ռազմիկ»-ի պարտականութիւնն է՝ տալ առաճիկ գրքոյններով կամ յօդածաշարով փորձնական ու գործնական հրահանգներ գրքոյնում շօշափած հիմնական հարցերի մասին:

Գրքոյնը գրած է պարզ եւ առիճնող ոճով եւ մատչելի է ամէն մի ընթերցողի համար: Ցանկալի է, որ նա լայնօրէն տարածւի մասնաւորապէս մեր երիտասարդ ընթերցողների մէջ: Ա.

Ա. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ՝ «Արծիւն իր բոյնին մէջ»

1938 թ., Փարիզ

Արծիւն Խրիմեան Հայրիկն է: Բոյնը՝ վան - վարձքը: Հեղինակը՝ յայտնի ռաւակավար գործիչ Ա. Թերզիպաշ-

եանը, որ մամուլում ծանօթ է իբրեւ կրթութիւն յօդածների հեղինակ: Ներկայ գիրքը, ակալայն, ճիշտ հակառակ ոգիով



է՝ գրած: Ի՞նչ ասել է սէր. հեղինակը սիրում է Արծիւն, իսկ սէրը հրաշագործ է:

Ա. Թէրզիպաշեանի գիրքը ընդգրկում է Հայրիկի վեցամեայ առաջնորդութեան շրջանը եւ յարակից անցքերը Վասպուրականում — 1879 — 1885 թ.: Հեղինակի գլխաւոր աղբիւրը եղիլ են հօր՝ Յար. Թէրզիպաշեանի եւ իր անձնական յուշերը. ինչպէս նաեւ Հ. Անեմեանի «Հայոց Հայրիկ» հատորը: Պատմութիւն չէ Ա. Թէրզիպաշեանի տւածը, ոչ էլ փաստերով ու քիւրով հիմնաւորւած յուշեր. որպէս պատմական աղբիւր նրա գործը պայմանական նշանակութիւն ունի: Նա ջանացել է տալ աւելի միջավայրի ու դէպքերի ոգին, մթնոլորտը, պատկերացնել այն ժամանակայ մարդկանց մտածումներն ու ապրումները, եւ, պէտք է ասել, ընդհանուր անմամբ, նրան յաջողւել է այդ: Գիրքը գրւած է սիրով ու ջերմութեամբ, կենդանի ու գրաւիչ ոճով, յաճախ սուր, գրեթէ միշտ բարեացակամ հումորով: Որոշ տիպեր պատկերացւած են գունագեղ գծերով, ինչպէս Քեռոթագաւորը, կամ Մարիամ փաշան, Յուսիկ վարդապետը, հաշատուր Կարուղիկոսը: Հայրիկի պատկերը պատած է միշտ լուսապսակով. Ա. Թէրզիպաշեանը խօսում է նրա մասին, ինչպէս սիրահարը կը խօսէ իր սիրոյ առարկայի մասին: Հայրիկը նրա աչքում մեծ համբար է՝ «աբտակարգ պէսպիսութեամբ օծուած համբար մը, որ կրնար լուսեր մը դառնալ, եթէ Գերմանիոյ մէջ ծնած ըլլար, Գերմանիոյ մը՝ Անգլիոյ մէջ. Լամարքին մը՝ Ֆրանսայի մէջ»:

Գրքի մէջ կան շատ կենդանի էջեր, ինչպէս սովորական պատկերը, իշխաններու ծեծը, Պողոս Եպ. ի առաջնորդ ընտրւելու պարագաները, Հայրիկը վարագում, Հայրիկի եւ Սրտնճոռեանի փոխյարաբերութիւնները եւ այլն: Իշխանների ծեծի պատմութիւնը մեզ քուր է միակողմանի ու միտումնաւոր. ին-

չո՞ւ հայրենասիրութիւն չենք աղբիւր եւ «ծեծողների» կողմից: Ծեծը այն ժամանակայ «գաղափարական պայքարի» ձեւերից մէկն էր:

Գրքի մէջ ամենատեղեւորը Հայրիկի հանրային դիմագծի պատկերացումն է: Առ հասարակ բարդ նկարագրի տէր էր Հայրիկը. նրա այս կամ այն գործից դատելով՝ կարելի է ներկայացնել եւ իբրեւ ծայրայեղ յեղափոխական եւ իբրեւ պաշտպանողական մարդ՝ չափաւոր ու զգուշ: Ա. Թէրզիպաշեանը այս երկու յատկութիւնն էլ ընդգծել է, չի անտեսել եւ նրա փառասիրութիւնները: Այս կողմը լաւ է ըմբռնւած ու գեղեցիկ կերպով պատկերացւած է:

Հետաքրքրական է եւ մի քիչ անսպասելի Ա. Թէրզիպաշեանի պաշտպանողականը ընդդէմ այն բնադատների, որոնք դատապարտում են իրիմեանի քաղաքական գործունէութիւնը. «Կարելի՞ է միքէ, հարցնում է Ա. Թէրզիպաշեանը, իտէալի մարդը դատել անոր գործունէութեան արդիւնքէն... Ի՞նչ պիտի ըլլար բնադատի դատաստանը իրիմեանի մասին, եթէ, օրինակի համար, մեծ պատերազմը չծագէր, եթէ Թուրքիան անոր չմտնակցէր, եթէ Քեմալ մը մէջտեղ չելներ եւ յունական բանակը անակնկալօրէն չի կազմալուծէր եւ կամ եթէ այս ամէն «եթէ»-ներէն վերջ, Ֆրանսա եւ Իտալիա, յանկարծ, չփոխէին իրենց քաղաքականութիւնը Թուրքիոյ հանդէպ »:

Ի բերանոյ քուրմէ դատեցար. «Կարելի՞ է միքէ իտէալի մարդը դատել անոր գործունէութեան արդիւնքէն»: Ա. Թէրզիպաշեան եւ իր գաղափարակցները քաջութիւն կունենան այս նշմարութիւնը ընդունիլ ո՛չ միայն իրիմեանի, այլ եւ ուրիշների վերաբերմամբ: Եթէ նրանք այդ կշռաչափով մտնեն մեր երեկւայ եւ այսօրայ կեանքին, ինչե՛ր — ինչե՛ր պիտի հերքեն իրենց միջնեւ այժմ ասածներից...

Ս. Վ.Բ.